ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)

Ներկայացվող նախագծի ընդունումը պայմանավորված է Կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 1902-Լ որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի «Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն» բաժնի 18.4-րդ կետի պահանջով, ըստ որի՝ մինչև 2024 թվականի հունիսի 20-ը էլեկտրոնային առողջապահության համակարգի տվյալների հիման վրա Միասնական սոցիալական ծառայության կողմից ապահովվելու է մայրության նպաստի նշանակումը և վճարումը:

Բացի այդ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի զարգացման և վարչարարության բարելավման ռազմավարությունը և դրանից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1830-Լ որոշման «Էլեկտրոնային և թվային գործիքակազմի ներդրում և զարգացում» ենթանպատակի 1.1.9 կետով հաստատվել է «ՀՀ առողջապահության նախարարության, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության միջև նպաստների գծով տեղեկատվության փոխանակման էլեկտրոնային հարթակի ներդրում» միջոցառումը, որի կատարման վերջնաժամկետ է սահմանվել 31.03.2025 թվականը, ինչը նշանակում է, որ օրենքն ընդունումից հետո օրենքից բխող ծրագրավորման աշխատանքների (կատարվելու են երեք կառույցների միջև) իրականացման համար շատ սեղմ ժամկետ է մնում՝ ծրագրի տեստավորման, տեղեկատվության փոխանակման և պատշաճ ներդրման նպատակով:

««Պետական նպաստների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի ընդունումը ևս պայմանավորված է Կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 1902-Լ որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի «Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն» բաժնի 18.4-րդ կետի պահանջով, ըստ որի՝ մինչև 2024 թվականի հունիսի 20-ը էլեկտրոնային առողջապահության համակարգի տվյալների հիման վրա Միասնական սոցիալական ծառայության կողմից ապահովվելու է մայրության նպաստի նշանակումը և վճարումը:

1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների՝ գործող օրենսդրության շրջանակներում մայրության նպաստը միայն չաշխատող անձանց դեպքում է վճարում Միասնական սոցիալական ծառայությունը: Վարձու աշխատող հանդիսացող անձի թե՛ մայրության նպաստը, թե՛

ժամանակավոր անաշխատունակության նպաստը նշանակում հաշվարկում և վճարում է գործատուն: Ընդ որում, գործատուի կողմից վճարված մայրության նպաստն ամբողջությամբ փոխհատուցվում է պետական բյուջեի միջոցներից, իսկ ժամանակավոր անաշխատունակության նպաստը՝ 6-րդ օրվանից հետո ընկած ժամանակահատվածի համար գործատուն պետական բյուջեի միջոցներից ստանում է փոխհատուցում (ժամանակավոր անաշխատունակության առաջին 5 օրերի համար գործատուն վճարում է իր միջոցներից, որը չի փոխհատուցվում):

Այսպիսով, ստացվում է որ պետական միջոցները (նպաստի տեսքով) նշանակվում և վճարվում են գործատուի կատարած հաշվարկներով, որը բավականին ռիսկային է:

Ընդ որում, պետական մարմինն (ՊԵԿ, Միասնական սոցիալական ծառայություն) այդ հաշվարկները կարող են ստուգել միայն այն դեպքում, երբ գործատուն դիմում է փոխհատուցում ստանալու համար:

Այս տեսակետից էլեկտրոնային առողջապահական համակարգի ներդրմամբ հնարավորություն է տրվում նպաստի համար անհրաժեշտ տեղեկատվության ինքնաշխատ փոխանակման միջոցով նպաստների նշանակման գործընթացը իրականացնել պետական մարմնի միջոցով:

Բացի վերը նշվածից, գործող կարգավորումների համաձայն՝ մայրության նպաստը հաշվարկվում է օրացուցային օրերով, իսկ ժամանակավոր անաշխատունակության նպաստը՝ աշխատանքային օրերով: Ընդ որում, ժամանակավոր անաշխատունակության նպաստ հաշվարկելու համար հիմք ընդունվող միջին աշխատավարձը հաշվարկելիս հաշվի են առնվում տվյալ վարձու աշխատողի աշխատանքային ռեժիմը, տվյալ կազմակերպության կամ տվյալ վարձու աշխատողի համար Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 155-րդ հոդվածի համաձայն սահմանված հանգստյան օրերը, հաշվարկային ժամանակահատվածում մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդ լինելու դեպքում՝ նաև աշխատանքային պայմանագրով սահմանված աշխատավարձը: Հարկ է նկատի ունենալ, որ աշխատանքային ռեժիմի վերաբերյալ գործատուն հարկային մարմնին տեղեկատվություն չի տրամադրում, իսկ տվյալների փոխանակման ինքնաշխատ եղանակով նպաստ նշանակելիս վերը նշված հանգամանքների հաշվառմամբ, գործընթացը դառնում է դժվար կիրառելի: Բացի այդ, նպաստների հաշվարկման միանման մոտեցում ապահովելու նպատակով նպատակահարմար է ժամանակավոր անաշխատունակության նպաստը նույնպես հաշվարկել օրացուցային օրերով:

Չաշխատող անձանց դեպքում գործող օրենսդրության շրջանակներում մայրության նպաստը նշանակում և վճարում է Միասնական սոցիալական ծառայությունը՝ հիմք ընդունելով քաղաքացու կողմից ներկայացված անաշխատունակության թերթիկը:

էլեկտրոնային առողջապահական համակարգի ներդրմամբ հնարավորություն է տրվում չաշխատող անձին մայրության նպաստի համար անհրաժեշտ տեղեկատվության ինքնաշխատ փոխանակման միջոցով նպաստների նշանակման գործընթացը իրականացնել առանց քաղաքացու կողմից տարածքային կենտրոն ներկայանալու և փաստաթղթեր ներկայացնելու:

1.2. Առկա խնդրի առաջարկվող լուծումը

Հաշվի առնելով վերը նշվածը՝ առաջարկվում է համապատասխան փոփոխություններ կատարել «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» և ««Պետական նպաստների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքներում:

2. Կարգավորման առարկան

Ներկայացվող նախագծով առաջարկվում է՝

I. ««Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» օրենքով՝

1. Հաշվի առնելով Միասնական սոցիալական ծառայության կողմից վարվող տեղեկատվական շտեմարանի (ստեղծվելու է օրենքն ընդունվելուց հետո), «Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» օրենքով սահմանված տեղեկատվական բազայի և էլեկտրոնային առողջահության համակարգի տվյալները՝ ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների հաշվարկման, նշանակման և վճարման (պետական բյուջեից վճարման ենթակա գումարի մասով) գործընթացն իրականացնել Միասնական սոցիալական ծառայության միջոցով (բացառությամբ, երբ անաշխատունակությունն առաջանալու օրվա դրությամբ վարձու աշխատողին վերաբերող տեղեկատվությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն է), իսկ գործատուի միջոցներից վճարման ենթակա գումարը վճարի գործատուն՝ հիմք ընդունելով Հարկային մարմնի միջոցով ստացված՝ Միասնական սոցիալական ծառայության նպաստի հաշվարկը: Վարձու աշխատողին, ում վերաբերող տեղեկատվությունն անաշխատունակությունն առաջանալու օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ համարվում է սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն, նպաստը հաշվարկում, նշանակում և վճարում է Կառավարության սահմանած մարմինը՝ Կառավարության սահմանած կարգով:

2. Ժամանակավոր անաշխատունակության նպաստը նույնպես հաշվարկել օրացուցային օրերով՝ առաջին 7 օրացուցային օրվա (գործող՝ 5 աշխատանքային օրվա փոխարեն) համար՝ գործատուի միջոցներից, իսկ մնացած ժամանակահատվածը՝ պետական բյուջեի միջոցներից:

3. Ժամանակավոր անաշխատունակության նպաստ հաշվարկելու համար հիմք հանդիսացող միջին ամսական աշխատավարձը հաշվարկվելու է գործող կարգով՝ հաշվարկային ժամանակահատվածում անձի ունեցած եկամուտը 12-ի բաժանելու միջոցով: Հաշվարկային ժամանակահատվածում եկամուտների վերաբերյալ տեղեկատվությունը հաշվառվելու է ժամանակավոր անաշխատունակության առաջին օրվա դրությամբ «Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» օրենքով սահմանված տեղեկատվական բազայում առկա տվյալների հիման վրա:

Միջին ամսական աշխատավարձը հաշվարկելիս, եթե անձը հանդիսանում է համատեղությամբ աշխատող կամ միաժամանակ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձ, ժամանակավոր անաշխատունակության նպաստը հաշվարկվելու է առանձին՝ յուրաքանչյուր գործատուի համար (կամ որպես

ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձ) և տեղեկատվությունը հարկային մարմնի միջոցով փոխանցվելու է գործատուներին, իսկ մայրության նպաստի դեպքում, հաշվի առնելով բոլոր գործատուների մոտ ունեցած եկամուտը Միասնական սոցիալական ծառայության կողմից նշանակվելու և վճարվելու է մեկ նպաստ:

Ընդ որում, եթե հաշվարկային ժամանակահատվածում առկա են ամիսներ, որոնց ընթացքում անձը գտնվել է խնամքի արձակուրդում, ապա այդ ամիսներից յուրաքանչյուրի համար որպես եկամուտ հաշվառվելու է խնամքի արձակուրդն սկսվելու ամսվան նախորդող ամսվա համար վարձու աշխատողի գործատուի վճարած (վճարման ենթակա) եկամուտը, իսկ այդ եկամտի բացակայության դեպքում՝ նվազագույն ամսական աշխատավարձի հիսուն տոկոսը (գործող կարգով՝ այս դեպքում հիմք է ընդունվում աշխատանքային պայմանագրով սահմանված աշխատավարձը):

4. Նպաստի չափը հաշվարկելու համար հիմք ընդունվող մեծությունը բաժանվում է 30.4-ի (մեկ ամսվա միջին օրերի) և բազմապատկվում՝

1) հղիության և ծննդաբերության արձակուրդի ժամանակահատվածի օրացուցային օրերի թվով, եթե հաշվարկվում է մայրության նպաստ.

2) ժամանակավոր անաշխատունակության օրացուցային այն օրերի թվով, որոնց համար ժամանակավոր անաշխատունակության նպաստը՝

ա. վճարվում է գործատուի միջոցներից,

բ. վճարվում է պետական բյուջեի միջոցներից:

5. Սահմանել նպաստ նշանակելու նոր ընթացակարգ, համաձայն որի՝ ընդհանուր դեպքում անձը որևէ դիմում չի ներկայացնում: Նպաստ նշանակելու գործընթացը սկսվում է էլեկտրոնային առողջահության համակարգից ստացված տեղեկատվության հիման վրա՝

1) Ծառայությունը ժամանակավոր անաշխատունակության թերթիկը բացելու և փակելու վերաբերյալ տեղեկատվությունը ստանալու է էլեկտրոնային առողջահության համակարգից և Հարկային մարմնի միջոցով տեղեկացնելու է գործատուին,

2) Հարկային մամինը վերը նշված տեղեկատվությունը ստանալուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում Ծառայությանն է տրամադրելու նպաստ հաշվարկելու համար պահանջվող տեղեկատվությունը կամ այդ տեղեկատվությունը տրամադրած լինելու դեպքում նաև՝ փոփոխությունները,

3) 5 աշխատանքային օրվա ընթացքում լիազոր մարմինը սահմանված կարգով հաշվարկելու է նպաստի չափը Հարկային մարմնի միջոցով տրամադրվելու է գործատուին,

4) եթե էլեկտրոնային առողջապահական համակարգում առկա տվյալներով անձի համար բացվում է ժամանակավոր անաշխատունակության (այդ թվում՝ հղիության և ծննդաբերության պատճառով առաջացած) թերթիկ, ապա այդ ժամանակահատվածի համար վարձու աշխատողին վճարվում է ժամանակավոր անաշխատունակության կամ մայրության նպաստ, իսկ աշխատավարձ չի հաշվարկվելու և չի վճարվելու:

6. Դիմումի հիման վրա նպաստ նշանակելու (վճարելու) հարցը կարող է ծագել, օրինակ, դատական ակտի հիման վրա կամ ժամանակավոր անաշխատունակ անձի՝ մինչև նպաստ նշանակելը կամ վճարելը մահանալու դեպքում:

7. Անաշխատունակության ժամանակահատվածի առաջին օրվա վերաբերյալ տեղեկատվություն ստանալուց հետո՝ մինչև նպաստ նշանակելը անձի մահվան դեպքում նպաստը նշանակել, հաշվարկել և վճարել մահացողի ընտանիքի անդամին (ամուսնուն, ծնողին, զավակին, 14 տարեկան և դրանից բարձր տարիքի անչափահաս երեխային, Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալներով աշխատողի մահվան օրվա դրությամբ նրա հետ նույն վայրում (հասցեում) համատեղ հաշվառված՝ ընտանիքի այլ անդամին)՝ դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը անձի մահվան օրվանից հետո՝ վեցամսյա ժամկետում լիազոր մարմին ներկայացնելու դեպքում: Վեցամսյա ժամկետը լրանալուց հետո չվճարված նպաստի գումարը վճարել ժառանգության վկայագրի հիման վրա:

8. Նպաստը վերահաշվարկելու համար սահմանել 36 ամսյա ժամկետ, որի ընթացքում, եթե գործատուն ներկայացնում է ճշտված հաշվարկ, ապա Հարկային մարմնից 1 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկատվությունը ստանալուց հետո վերահաշվարկում է նպաստը: Այս դեպքում, եթե տեղեկատվությունը ստացվել է 3 ամսվա ընթացքում, ապա նպաստի պակաս վճարված գումարը վճարվում է ընդհանուր կարգով, իսկ ավել վճարված գումարի՝ պետական բյուջեից վճարված չափը վարձու աշխատողը պետական բյուջե է վերականգնում լիազոր մարմնի հետ փոխհամաձայնեցված ժամանակացույցի հիման վրա՝ ոչ ավել, քան ժամանակացույցը կնքելու ամսվանից հետո՝ 3 ամսվա ընթացքում: 3-36 ամսվա ընթացքում տեղեկատվությունը ստանալու դեպքում ապա, նպաստի պակաս վճարված գումարը վարձու աշխատողի գործատուն վարձու աշխատողին վճարում է իր միջոցներից, իսկ ավել վճարված գումարի՝ պետական բյուջեից վճարված չափը պետական բյուջե վերականգնում է գործատուն՝ մեկ ամսվա ընթացքում, իսկ նրա կողմից ավել վճարված չափը վերականգնման ենթակա չէ:

36 ամսյա ժամկետից հետո վարձու աշխատողի գործատուի կողմից հարկային մարմին ներկայացված գրանցման հայտի կամ ճշտված հաշվարկի կամ հարկային հսկողության իրականացման արդյունքում հայտնաբերված՝ նպաստը հաշվարկելու համար հիմք հանդիսացող տեղեկատվության (տվյալի) փոփոխության դեպքում նպաստը չի վերահաշվարկվելու:

9. Սահմանել նաև լիազորված պետական մարմինների իրավասությունները:

II. ««Պետական նպաստների մասին» օրենքով առաջարկվում է սահմանել, որ՝

1. չաշխատող անձանց մայրության նպաստը նշանակելու համար հիմք են հանդիսանում չաշխատող անձի հղիության և ծննդաբերության (ժամանակավոր անաշխատունակության) վերաբերյալ էլեկտրոնային առողջապահության համակարգում, հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու առաջին օրվա դրությամբ չաշխատող անձ հանդիսանալու վերաբերյալ՝ «Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» օրենքով սահմանված տեղեկատվական բազայում,

հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու առաջին օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության բնակության վայրի հասցեով հաշվառում ունենալու վերաբերյալ Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա և քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններից ստացված տվյալները,

2.էլեկտրոնային առողջապահության համակարգից մայրության նպաստ նշանակելու համար անհրաժեշտ տվյալները ստանալ «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» օրենքի համաձայն (տվյալ օրենքի նախագիծն արդեն իսկ շրջանառվել է),

3. չաշխատող անձի մահվան դեպքում, եթե նրա տվյալները ստացվել են էլեկտրոնային առողջապահության համակարգից, նպաստ նշանակել մահացողի ընտանիքի անդամին (ամուսնուն, ծնողին, զավակին, 14 տարեկան և դրանից բարձր տարիքի անչափահաս երեխային, Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալներով անձի մահվան օրվա դրությամբ նրա հետ բնակության նույն վայրում (հասցեում) համատեղ հաշվառված անձին)՝ դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը անձի մահվան օրվանից հետո՝ վեցամսյա ժամկետում լիազոր մարմին ներկայացնելու դեպքում: Ընդ որում, միայն այս դեպքում է մայրության նպաստ նշանակելու համար պահանջվում դիմում ներկայացնել,

4. մահվան պատճառով չստացված նպաստի համար ներկայացված դիմումը մերժելու հիմքերը (չեն ներկայացվել անհրաժեշտ փաստաթղթեր կամ դիմողը չի հանդիսանում ընտանիքի անդամ կամ կամ մահացողի տվյալները չեն ստացվել էլեկտրոնային առողջապահության համակարգից, կամ մահացած անձը չի հանդիսանում չաշխատող անձ կամ հաշվառված չէ ՝ Հայաստանի Հանրապետության բնակության վայրի հասցեով),

5. ներկայացված դիմումի հիման վրա մայրության նպաստ նշանակելու կամ մայրության նպաստ նշանակելը մերժելու դեպքում այդ մասին լիազոր մարմինը 5 աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ տեղեկացնում է այն անձին, ում նշանակել է մայրության նպաստը կամ ով ներկայացրել է դիմումը (դիմումը մերժելու դեպքում)՝ նշելով մերժման հիմքը:

3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը

Նախագծերն ընդունվելու ընդունվելու դեպքում կբարելավվի ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների նշանակման գործընթացը և կապահովվի հասցեականությունը՝ էլեկտրոնային առողջապահության համակարգի տվյալների հիման վրա նպաստը կնշանակի և կվճարի Միասնական սոցիալական ծառայությունը:

4. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026թթ. ծրագիր, ոլորտային և/կամ այլ ռազմավարություններ

««Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» օրենքի մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և ««Պետական նպաստների մասին» օրենքում

լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերը բխում են Կառավարության 2021-2026թթ. ծրագրի 4.6-րդ կետից (Կառավարությունը քայլեր է ձեռնարկելու կենսաթոշակառուներին և նպաստառուներին մատուցվող ծառայությունների որակը բարձրացնելու, ինչպես նաև կենսաթոշակների և նպաստների նշանակման, վճարման գործընթացները լավարկելու նպատակով կատարելագործվելու է օրենսդրությունը, ընդլայնվելու է առցանց մատուցվող ծառայությունների սպեկտրը՝ ի հաշիվ տեղեկատվական համակարգեր ներառող տվյալների ստացման որակական և քանակական բարելավման) և ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ցանկի «Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն» բաժնի 18.4-րդ կետից:

5. Տեղեկանք

««Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և ««Պետական նպաստների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերի ընդունման կապակցությամբ եկամուտների ավելացում նախատեսված չէ, իսկ ծախսերի դեպքում հարկ է նկատի ունենալ, որ ծրագրի տեխնիկական ապահովման համար հարկ կլինի հատկացնել լրացուցիչ միջոցներ (Ծրագրային ապահովման ներդրման գնահատականը հնարավոր կլինի ունենալ տեխնիկական առաջադրանքի հիման վրա): Նպաստների գծով ծախսերը նախատեսվել են 2025 թվական պետական բյուջեի նախագծով: Ընդ որում, այս առումով հարկ է նկատի ունենալ, որ ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների համար 2023-2025 ժամանակահատվածների համար նախատեսված միջոցները նույնական են.

Ծրագիր	**Միջոցառում**	**Միջոցառման անվանումը**	**2023թ. (փաստացի) հազ. դրամ**	**2024թ. (փաստացի) հազ. դրամ**	**2025թ (հազ. դրամ)**
1082	12001	Ժամանակավոր անաշխատունակության նպաստ	5,094,192.1	5,880,100.0	5,800,000.0
	12002	Մայրության նպաստ	16,378,050.26	16,440,700.00	19,010,500.0